ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2017Թ.
№ 27 (445)
www.syuniacyerkir.am

º í Ó»±½ å Ç ï Ç
³ ñ ¹ Ûáù Ù» Ýù »ñ · » Ýù
ÑÇÙÝ©©©
º ÔÆÞ º â ² ð º Üò
î »ë ` ¿ç 2« 5« 8

Կարեն Կարապետյանը՝ Սյունիքի մարզում

Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում քննարկվել են մարզի եւ համայնքների զարգացման ծրագրերի ընթացքը, կատարված աշխատանքներն ու անելիքները:

Ներկայացնելով մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը եւ մակրոտնտեսական ցուցանիշները՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը նշել է, որ տարվա ընթացքում հաջողվել է հիմնականում ապահովել մարզպետարանի աշխատանքային ծրագրով եւ մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների կատարումը: Անհրաժեշտ օգնություն է ցուցաբերվել մարզի 72 համայնքներին՝ զարգացման ծրագրերի մշակման եւ ընդունման գործընթացում: Սյունիքի մարզում 2016 թվականին երկու փուլով իրականացվել են վարչատարածքային փոփոխություններ, որոնց շնորհիվ ձեւավորվել են 5 խոշորացված համայնքներ՝ Տաթեւ, Գորիս, Տեղ, Մեղրի եւ Գորայք: 2017-ին կազմավոր-

էջ 2

«Նորավան» ենթակայանը՝ բարեկամության խորհրդանիշ ու նոր կամուրջ

Հարեւան երկու երկրի՝ Հայաստանի եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ համագործակցությունը լայն ընդգրկում ունի: Այն ներառել է նաեւ էներգետիկ համակարգը: Էներգետիկ համագործակցությունը երկու երկրին հնարավորություն է տվել իրենց էներգահամակարգերում մեծացնել էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունները:

Այդ նպատակով այժմ կառուցվում է նաեւ Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման 3-րդ բարձրավոլտ գիծը: Այն երկշղթա էլեկտրահաղորդման գիծ է: Դրա կառուցման համաձայնությունը ձեռք է բերվել 2004թ.: 2006թ. երկու երկրները կառուցման վերաբերյալ ստորագրել են փոխըմբռնման հուշագիր: Սակայն 2013թ. Իրան-Հայաստան 400 կվ 3-րդ էլեկտրահաղորդման գծի շինարարության ֆինանսավորումը սառեցվեց: Դա ժամանակավոր բնույթ կրեց: Հայկական եւ իրանական կողմերի միջեւ հետագա ակտիվ բանակցությունները նոր էջ փաստեցին այս գծի կառուցման գործում. որոշվեց վերսկսել ծրագրի ֆինանսավորումը: Կնքվեց նոր պայմանագիր, ըստ որի, ծրագիրն իրականացնելու համար 107,9 միլիոն եվրո պետք է ներդրվի գործում: Այս գումարը տրամադրում է իրանական կողմը: Գումարի 77 տոկոսը տրամադրում է Իրանի արտահանման զարգացման բանկը, իսկ մնացած 23 տոկոսը հատկացնում է ծրագրի գլխավոր կապալառու իրանական «Սանիր» ընկերությունը: Իսկ հայկական կողմը հետագայում իրանական կողմին գումարը փոխհատուցելու է էլեկտրաէներգիայի առաքումների տեսքով:

> *Իրան-Հայաստան 400 կվ երկշղթա օդային գծի՝ Հայաստանում կառուցվող հատվածի երկարությունը կազմում է 279 կմ:*

Ծրագիրն իրականության վերածելու նպատակով այժմ կառուցվում է նաեւ «Նորավան» ենթակայանը, որը գտնվում է Սիսիանի տարածաշրջանում: Այն հնարավորություն կտա երկու երկրի էներգահամակարգերի միջեւ էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը 350 ՄՎտ-ից հասցնել 1000 ՄՎտ-ի: Այս քայլի շնորհիվ Հայաստանի էներգահամակարգի հարավային եւ կենտրոնական հատվածների կապի հուսալիությունը կբարձրանա, ու Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման նոր մակարդակ կունենանք:

> *Բացի դրանից, այս ծրագրով նախատեսվում է իրանական էլեկտրացանցերը կապել Վրաստանի եւ Ռուսաստանի հետ:*

Եվ ահա մենք Սյունիքի կարեւորագույն կառույցներից մեկում ենք՝ «Նորավան» կառուցվող ենթակայանում, առաջինն այստեղ, որ աչքի է զարնում հսկայական շինհրապարակն է: Այն զբաղեցնում է շուրջ յոթ հեկտար

էջ 3

Նրանց հավատի փունը, լույսի փունը հասցե ունի՝ «Ավալ թրեիդ» ՍՊԸ

«Ավալ թրեիդ» ՍՊ ընկերություն. սա Սիսիանի մի խումբ կանանց «թագավորության» հասցեն է: Այստեղ տղամարդկանց մատների վրա կարելի է հաշվել: Սակայն նրանք «եղանակ» ստեղծող չեն: Այստեղ ժամանակի տերը, «եղանակ» ստեղծողը, «խաղի կանոններ» թելադրողը կանայք են: Եվ հետաքրքիրն այն է, որ որ կանայք այստեղ գործում են հանուն Սիսիանի սկզբունքով: Իսկ դրա ամենամեծ «հուշարարը» արտադրանքի բարձր որակն է: Նրանք ամեն ճիգ գործադրում են, որ միայն ու միայն որակյալ արտադրանք թողարկեն: Նրանց թողարկած արտադրանքն իրացվում է Ռուսաստանի Դաշնությունում: Եվ պատվիրատուների ցանկն անընդհատ ընդլայնվում է: 20-30 անուն արտադրատեսակ է թողարկվում այստեղ: Տեսականին բավականին հարուստ է՝ մանկական, կանացի, տղամարդու ներքնազգեստ, նաեւ տրիկոտաժե սավաններ՝ հետաքրքիր լուծմամբ: Այս սավանները սովորական, մեր իմացած սավանների նման չեն, դրանք համարյա նման են ծածկոցների եւ չեն «փախչում» անկողնուց:

Ժամանակակից մեքենասարքավորումների շնորհիվ կանայք կարողանում են շունչ տալ դիզայներների երեւակայությանը: Դրա համար էլ նրանց արտադրանքը միշտ պահանջարկ ունի:

Կարի այս արտադրամասում է աշխատում նաեւ Սուսաննա Մանուկյանը:

– Ամսական 70-90 հազար դրամ աշխատավարձ եմ ստանում: Մինչեւ երկինք գոհ եմ բոլորից: Աստված թող այս արտադրամասը ստեղծողներին շատ հաջողություն տա, երջանիկ ու առողջ լինեն, ուր էլ գնան, ինչ գործ էլ ձեռնարկեն՝ նրանց ճանապարհին միշտ կանաչ լույս վառվի:

– Լավ էլ փիլիսոփայում ես, – կողքից ասում է Նաիրուհին:

– Չեմ փիլիսոփայում, – ասում է Սուսաննան: – Ես 60 տարեկան եմ, շուտով թոշակի եմ գնալու: Թոշակ կստանամ ու կապրեմ: Բայց ես չեմ ասում՝ ինձնից հետո՝ թեկուզ ջրհեղեղ: Այստեղ երիտասարդ շատ կանայք են աշխատում: Ուզում եմ, որ նրանք միշտ աշխատանք ունենան: Ինչի համար էլ օրհնում եմ այդ

Արմեն Անդրեասյան
«Ավալ թրեիդ» ՍՊԸ տնօրեն

մարդկանց:

– Երկու աղջիկ ունեմ, ամուսինս էլ չի աշխատում,-ասում է Աննա Օհանյանը, – մեր ընտանիքի սոցիալական վիճակը ստիպեց

էջ 3

Գլխավոր դատախազից խնդրում են պարզել՝ արդյո՞ք բնապահպանների դեմ արշավը կազմակերպել է Սյունիքի մարզպետը

Բնապահպան Արթուր Գրիգորյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին, մասնավորապես խնդրելով պարզել Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի առնչությունը հասարակական կազմակերպությունների եւ անհատ անձանց դեմ կազմակերպված՝ վարկաբեկող անիմացիոն հոլովակի նկարահանման եւ տարածման հետ: Գրիգորյանը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է իր վարկածն ապացուցող հետեւյալ հանգամանքները.

Արթուր Դավթյան
ՀՀ գլխավոր դատախազ

Փաստ 1

2016թ. դեկտեմբերի 27-ին Կապան քաղաքում տեղի ունեցած քննարկման ընթացքում մարզպետ Հակոբյանը խոսել է «Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի» ստեղծման մասին՝ նշելով, որ այդ հիմնադրամին փոխանցված ֆինանսական միջոցներն ուղղել են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բարեգործական հիմնադրամին», որի հոգաբարձուների խորհրդի նախագահ է հանդիսանում ինքը, ու նաեւ «պարտքով» իրենցից գումարներ են վերցրել՝ վերադարձնելու նպատակով:

Հակոբյանը, ով մինչեւ մարզպետ նշանակվելը հանդիսացել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ադմինիստրատիվ տնօրեն եւ նույն ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, մարզպետ նշանակվելուց հետո, իր պաշտոնեական լիազորություններն անցնելով, «Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի» հանրային միջոցները տրամադրել է մասնավոր հանքարդյունաբերական ընկերությանը կից հիմնադրամին:

Ներկայացված փաստի հիման վրա անհրաժեշտ է քրեաիրավական գնահատական տալ մարզպետի եւ մասնավոր առեւտրային ընկերության ֆինանսական միջոցները տնօրինող հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի գործառույթները համատեղելու ընթացքում իրականացված ֆինանսական գործարքների օրինականությանը եւ այդ ընթացքում պաշտոնեական լիազորություններն անցնելով գույքային վնաս պատճառելու փաստերին: Մասնավորապես, ի՞նչ հետեւանքներ են առաջացել երկու հիմնադրամների միջեւ ոչ բանկային ֆինանսական փոխանցումներ կատարելու դեպքում, կամ ի՞նչ իրավական հիմքերով են իրականացվել մարզպետի նշած գործարքները եւ ի՞նչ չափի հնարավոր գույքային վնաս է պատճառվել պետությանը կամ կազմակերպություններին դրա հետեւանքով:

Հաշվի առնելով, որ իր տարեվերջյան հաշվետվության ընթացքում մարզպետ Հակոբյանը մի քանի անգամ մատնանշում է իր կնոջ կողմից ղեկավարվող «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության գործունեության մասին, անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք մարզպետ Հակոբյանը չի օգտագործել իր պաշտոնեական դիրքը «Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի» կամ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բարեգործական հիմնադրամի» ֆինանսական միջոցներն անձնական կամ խմբային շահերի սպասարկման համար օգտագործելու նպատակով: Կից ներկայացվող նյութերից հետեւում է, որ այդ միջոցները կարող էին ուղղակի դիտավորությամբ օգտագործվել այլ կազմակերպությունների եւ անձանց դեմ՝ վերջիններիս վարկաբեկող հոլովակների պատրաստման եւ տարածման, համակարգչային (հաքերային) հանցագործությունների կատարման համար՝ ելնելով անօրինական խմբային շահերից եւ կոռուպցիոն բնույթի այլ նպատակներից:

Փաստ 2

2017թ. ապրիլի 10-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱԵԹՆ) գործընթացի շրջանակներում տեղի է ունեցել Բազմաշահառու խմբի (այսուհետ՝ ԲՇԽ) քաղաքացիական հասարակության խմբակցության նիստ, որի ընթացքում «Հասարակության ձայն» (Civil Voice) հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Արթուր Համբարձումյանը ներկայացրել է փաստաթղթերի պատճեներ, որոնց համաձայն «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը մոտ 200 միլիոն դրամ է փոխանցել Կապան քաղաքում գործող մի քանի հասարակական կամակերպությունների՝ իր գործունեության համար հանրային աջակցություն ապահովելու նպատակով: Տրամադրված պատճենների զննությունից առաջանում են կասկածներ, որ դրանք կարող են կեղծված լինել: Մինչ օրս չեն ներկայացվել տրամադրված պատճենների բնօրինակները:

Ներկայացված փաստաթղթերից մեկում նշված է 81 միլիոն դրամի փոխանցման մասին, որի մասին նշված է նաեւ 2016թ. նոյեմբերի 25-ին «ֆեյսբուք» սոցիալական ցանցի փակ խմբում տեղադրված անիմացիոն հոլովակում:

Նկարագրված փաստական հանգամանքները ստեղծում են հիմքեր ուրվագծելու անձանց շրջանակը, որոնց մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողությունների միջոցով կարող է բացահայտվել հասարակական կազմակերպություններին եւ անհատ անձանց վարկաբեկող հոլովակի ստեղծմանը մասնակցած սուբյեկտներին եւ դրանում Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի ֆինանսական, կազմակերպչական եւ այլ ներգրավվածությունը՝ իր լիազորություններն անցնելով:

Փաստ 3

Նույն նիստի ընթացքում Արթուր Համբարձումյանի ներկայացրած տեղեկատվության համաձայն, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից Կապանում գործող հասարակական միավորումներին ուղղված ֆինանսական փոխանցումների վերաբերյալ փաստաթղթերն իրեն է տրամադրել «Հասարակության ձայն» հասարակական կազմակերպության գործընկեր «Հանրային դիվանագիտություն» (Paradiplomacy) հասարակական կազմակերպությունը (նիստն ամբողջությամբ տեսաձայնագրվել է):

ՀՀ արդարադատության նախարարության՝ իրավաբանական

էջ 5

Կապանի ԼՀԿ արտադրական արդյունքները երկրորդ եռամսյակում

«Պոլիմետալ» ընկերության՝ 2017թ. հուլիսի 25-ին հայտարարված արտադրական արդյունքների համաձայն՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատը 2017թ. երկրորդ եռամսյակում (հունիսի 30-ին ավարտված երեք ամիսը) արդյունահանել է 135 հազ. տոննա եւ վերամշակել 132 հազ. տոննա հանքաքար, արտադրել է 267 կգ ոսկի, 3.1 տոննա արծաթ, 300 տոննա պղինձ եւ 1200 տոննա ցինկ:

2017թ. առաջին կիսամյակում (հունիսի 30-ին ավարտված վեց ամիսը) արդյունահանվել է 250 հազ. տոննա, վերամշակվել է 246 հազ. տոննա հանքաքար, արտադրվել է 448 կգ ոսկի, 6.2 տոննա արծաթ, 600 տոննա պղինձ եւ 2300 տոննա ցինկ:

Կապանի լեռնահարստացման կոմբինատը շարունակում է բարելավումները գործնականում բոլոր ցուցանիշներով՝ ներառյալ արդյունահանման ծավալների նշանակալից ավելացումը, ինչը պայմանավորված է ստորգետնյա հանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ միջոցառումների շարունակական ներդրմամբ:

Պաշարների հաշվարկը JORC չափորոշիչի համաձայն եւ Կապանի լեռնահարստացման կոմբինատի ու Լիճքվազ-Թեյի հանքավայրի շահագործման համակցված ծրագիրը, ինչպես եւ ծրագրվել էր, պատրաստ կլինեն 2017թ. երրորդ եռամսյակում: ■

Կարեն Կարապետյանը՝ Սյունիքի մարզում

էջ 1

վել է 3 նոր համայնք՝ Կապան, Քաջարան եւ Սիսիան կենտրոններով, որոնց մեջ ներառվելու է 67 համայնք: Վահե Հակոբյանի խոսքով՝ մարզի համայնքների 2017թ. բյուջեներով նախատեսվել են մոտ 4.7 մլրդ դրամ եկամուտներ, այդ թվում սեփական եկամուտներ՝ մոտ 1.6 մլրդ. դրամ: Վեցամսյա ժամանակահատվածում նախատեսված 614.7 մլն դրամի դիմաց սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը կազմել է 697.5 մլն դրամ, կամ նախատեսվածի 113.5 տոկոսը: 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հավաքվել է 10.2 մլն դրամով ավելի գումար, սեփական եկամուտների աճը կազմել է 17.2 տոկոս: Նախորդ տարվա ընթացքում մարզում իրականացվել են շուրջ 6.9 մլրդ դրամի համաշինարարական աշխատանքներ, որոնց 23.8 տոկոսը կատարվել է պետական բյուջեի, իսկ 76.2 տոկոսը՝ ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

Դոնոր կազմակերպությունները գյուղատնտեսության ոլորտում իրականացրել են ավելի քան 2.3 մլրդ դրամի ներդրումային ծրագրեր ֆերմերային տնտեսություններին աջակցության, ներտնտեսային ոռոգման ցանցի եւ ջրամատակարարման համակարգի վերակառուցման նպատակով: Ձեկուցվել է, որ 2017թ. հրատապ ծրագրերի իրականացման համար հատկացվել է 294,2 մլն դրամ, որի շրջանակում շինարարական աշխատանքներ են տարվում մարզի Կապան, Սիսիան, Սպանդարյան, Արավուս, Մեղրի համայնքներում: Նախորդ տարվա ընթացքում մարզում իրականացվել են ավելի քան 24.5 մլրդ դրամի ներդրումային, հումանիտար եւ վարկային ծրագրեր՝ ընդգրկելով մարզի գրեթե բոլոր համայնքները:

Անդրադառնալով ներկայացված ցուցանիշներին՝ վարչապետ Կարեն Կարապետյանը նշել է, որ բացի մարզերի անձնագրերով ներկայացված հայտանիշերից, առաջիկայում տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը ներկայացնելու է 11 հայտանիշ, որոնց միջոցով տվյալ մարզում արձանագրված ցուցանիշների հիման վրա գնահատվելու է մարզպետարանի աշխատանքը, մարզում առկա ընդհանուր իրավիճակը եւ այն համեմատվելու է այլ մարզերի ցուցանիշների հետ: Վարչապետն ընդգծել է, որ ներկա դրությամբ մարզերի եւ նույն հնարավորություններն ունեցող համայնքների միջեւ առկա են ֆինանսական եւ այլ անհամաչափություններ: Կառավարության ղեկավարը կարեւորել է տարբեր ոլորտների թվայնացումն ու գույքագրումը եւ ավելացրել, որ թվերը լինելու են հետագա գործունեության ուղեցույց: *«Շատ հավանական է, որ տվյալ համայնքապետը նույնիսկ չգիտի, որ հանրապետությունում, օրինակ, աղբահանության միջին վճարը 200 դրամ է, ինչը մեկ շնչի նկատմամբ մեծ թիվ չի կազմում, սակայն դրա դիմաց մատուցվում է սկզբունքորեն որակյալ այլ ծառայություն: Վստահ եմ, որ ունենք ավելորդ ծախսերի մեծ ծավալ կամ ավելի որակյալ ծառայությունների մատուցման մեծ ներուժ: Դուք ունեք բավականին լուրջ ռեսուրսներ, որոնք կարող եք շատ ավելի նպատակային կառավարել:*

Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցին՝ պատվո շքանշան

«Մանթաշյանց» հիմնադրամի նախագահությունը (Հարություն Խաչատրյան, Արմեն Ամիրյան, Լեւոն Սարգսյան) «Մանթաշյանց ասպետ» արծաթե շքանշանով պարգեւատրել է Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցին՝ մշակույթի զարգացմանը խթանելու եւ մեկենասության հայրենի ավանդույթները վերահաստատելու համար:

Պարգեւատրությունը կատարվել է «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակում:

Շնորհավորում ենք:

«Այունյաց երկիր»

«Նորավան» ենթակայանը՝ բարեկամության խորհրդանիշ ու նոր կամուրջ

էջ 1 տարածք: Ենթակայանի կառուցման համար հողային աշխատանքներ են կատարվում, դրան զուգահեռ՝ տարածքը պարսպապատվում է: Հեդոյաթ Հադիփուռը, ով Իրանից է, համակարգում է ենթակայանի շինարարական աշխատանքները: Զրույցի ժամանակ նա ասաց, որ աշխատանքային ժամանակացույցը խախտվել է՝ ֆինանսական խնդիրների պատճառով: Բացի դրանից, կան նաեւ նախագծային խնդիրներ:

– Այս ամենը ժամանակի հարց է, շուտով դրանք կկարգավորվեն եւ «Նորավան» ենթակայանի կառուցումը կընթանա բնականոն հունով, - ասում է Հեդոյաթ Հուդիփուռը:

Ենթակայանի շինարարությունում կողք-կողքի աշխատում են պարսիկներն ու հայերը, միասին հաց ուտում, ասում-խոսում-կատակում: Հեդոյաթը հասցրել է արդեն հայերեն քիչ սովորել եւ մեր հարցերին պատասխանելիս ասում էր՝ դանդաղ խոսեք, որ հասկանամ:

– Հայերը լավ մարդիկ են, կամեցող, խելոք, բարի, նրանց հետ աշխատելը հեշտ է, կես խոսքից հասկանում ենք իրար, – ասում են պարսիկ շինարարները:

Հայ գործընկերներն էլ թե՝ օտար չենք, երկուսս էլ արիական ցեղից ենք, հորեղբոր ընտանիքներ ենք:

Կուզեինք երկար խոսել մեր բարեկամների հետ՝ ամեն ինչից: Սակայն մեկմեկու լեզու չիմանալը խանգարում է բոլորիս: Ինչպես ասում են՝ դա ոչինչ, ներելի է: Կարեւորն այն է, որ երկու երկրի համագործակցության շնորհիվ տարածաշրջանում ռազմավարական նշանակության, հեռուն գնացող նպատակներով կառույց է Իրան-Հայաստան 400 կվ երկշղթա օդային գիծը, որը կենսական նշանակություն կունենա բարեկամ երկու երկրի համար:

Հեդոյաթ Հադիփուռ

Երբ դրկից հարեւանդ լավն է, ամենադժվարին խնդիրն անգամ լուծում ունի: Իսկ Իրանը հենց այդպիսին է: Եվ այս գիծը բարեկամության մի նոր խորհրդանիշ է, որ կամրջում է երկու հարեւան երկրներին:

Այսպես են մտածում եւ գործում հայ ու պարսիկ շինարարները «Նորավան» կառուցվող ենթակայանում:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Օպտիմալացմամբ որեւէ մեկը միջոցներ կրճատելու խնդիր չի դնում, բայց տեսնում ենք նաեւ, որ առօրյայում կառավարման մեջ ունենք բազմաթիվ ոչ հետեւողական եւ ոչ համակարգված աշխատանք», – դիմելով համայնքապետերին՝ ասել է Կարեն Կարապետյանը:

Կառավարության ղեկավարը, անդրադառնալով ներդրումների ներգրավման ուղղությամբ տարվող աշխատանքներին, նշել է. *«Յուրաքանչյուրս պետք է գիտակցի, որ իր թիվ մեկ խնդիրը ներդրում ներգրավելն է, աշխատատեղ ստեղծելը, քանի որ սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխության առաջնային ցուցանիշը հենց դա է: Ելնելով դրանից՝ անհրաժեշտ է փորձել կապեր ստեղծել այն մարդկանց հետ, որոնք դուրս են եկել սյունյաց աշխարհից եւ հաջողությունների հասել. Նկատի ունեմ ոչ միայն գործարարներին, այլ նաեւ բժիշկներին, գիտնականներին, տնտեսագետներին, ներդրողներին, լրագրողներին»*: Կարեն Կարապետյանի խոսքով՝ պետք է հստակ պատկերացնել ներքին կապիտալը, առկա ներուժը, այն ակտիվացնելու ուղղությամբ հետեւողական քայլեր կատարել եւ ներդրումային հնարավորությունները պատշաճ ներկայացնել ներդրողներին: Վարչապետն ընդգծել է, որ Սյունիքում առկա է զարգացման մեծ ներուժ, կառավարությունը հետեւողականորեն առաջ է մղում Մեղրիի ազատ տնտեսական գոտու գործարկման ծրագիրը: *«Չեւավորելու ենք հետաքրքիր միջավայր, որի շրջանակում մարզի համայնքների համար կստեղծվեն Իրանի հետ համագործակցության մեծ հնարավորություններ»,* – ընդգծել է գործադիրի ղեկավարը:

Վարչապետին զեկուցվել են Սյունիքի մարզում գյուղատնտեսության, առողջապահության, կրթության, ճանապարհաշինության, աղբահանության ոլորտներում իրավիճակի եւ առկա խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները: Մասնավորապես, տեղեկատվություն է ներկայացվել ինտենսիվ այգիների հիմնման, զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավման, կրթական եւ առողջապահական համակարգերի գործունեության եւ օպտիմալացման աշխատանքների մասին:

Անդրադառնալով աղբահանության խնդիրներին՝ վարչապետը նշել է, որ համայնքները պետք է վերանայեն աղբահանության կազմակերպման սակագները՝ տարբեր սուբյեկտների համար սահմանելով համապատասխան չափանիշներ:

Գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուն զեկուցել է, որ մարզում առկա է 20 հազար գյուղացիական տնտեսություն, որից 2 հազար 700-ը ֆերմերային է: 43 հազար վարելահողերից մշակվում է 85 տոկոսը: Նշվել է, որ ակտիվ աշխատանքներ են տարվում ինտենսիվ այգիների հիմնման ուղղությամբ: Արդեն իսկ քննարկվում է նման 10 հայտ: Ընթացքի մեջ է 650 մլն դրամ արժողությամբ գյուղտեխնիկայի ձեռք բերման ծրագիրը՝ նախատեսված Սիսիանի տարածաշրջանի համար:

Կարեն Կարապետյանը կարեւորել է ծրագրի իրականացումը եւ մարզպետին հանձնարարել ներկայացնել մարզն ամբողջությամբ գյուղտեխնիկայով համալրելու ամբողջական ներդրումային ծրագիր: Անդրադարձ է կատարվել նաեւ ոռոգման համակարգի զարգացմանը: Վարչապետն առաջարկել է ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ համատեղ մանրամասն քննարկել առկա խնդիրները, գտնել ոռոգման խնդրի կարգավորման լուծումներ: Գործադիրի ղեկավարն ավելացրել է նաեւ, որ գյուղատնտեսության նախարարությունը կառավարությանն է ներկայացրել 7 ծրագիր, որոնց միջոցով այս ոլորտում արդյունավետությունը կտրուկ փոխվելու է:

Զեկուցվել է նաեւ, որ մարզի առողջապահական համակարգի վճարովի ծառայություններից մուտքագրված գումարներն ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արդեն իսկ կազմել են 175.3 մլն դրամ, ինչը գերազանցում է նախորդ ամբողջ տարվա մուտքերը մոտ 50 մլն դրամով: Նշվել է, որ դրական միտումը հիմնականում պայմանավորված է բժշկական կենտրոնների կառավարման համակարգի արդիականացմամբ:

Անդրադառնալով մարզի ավտոճանապարհների վերանորոգման հարցին՝ Կարեն Կարապետյանն անհրաժեշտ է համարել այս ոլորտում գտնել այլընտրանքային լուծումներ՝ հաշվի առնելով այդ ճանապարհների կարեւոր նշանակությունը: *«Պետք է խնդիրների ոչ ստանդարտ լուծումներ գտնել, մենք էլ ամեն կերպ նմանատիպ ծրագրերին ցուցաբերելու ենք աջակցություն: Այս պարագայում համայնքներում փոխվելու է եւ մթնոլորտը, եւ միջավայրը»,* – շեշտել է Կարեն Կարապետյանը:

Խորհրդակցության ընթացքում վարչապետին են ներկայացվել նաեւ տարբեր ոլորտներին առնչվող ներդրումային ծրագրեր, որոնք կքննարկվեն կառավարությունում եւ կներկայացվեն համապատասխան առաջարկություններ: Անդրադարձ է կատարվել նաեւ Կապանի օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ կատարվող ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքներին:

gov.am, 29 հուլիս 2017

Նրանց հավատի տունը, լույսի տունը հասցե ունի՝ «Ավալ թրեիդ» ՍՊԸ

էջ 1 գալ այստեղ: Հիմա ինչ-որ չափով մեղմացել է մեր ընտանիքի սոցիալական վիճակը՝ իմ աշխատանքի շնորհիվ:

Իսկ Ռիմա Գրիգորյանը որակի գծով հսկիչ է:

– Սիսիանցի կանայք լավ են աշխատում: Օրվա մեջ հատ ու կենտ արտադրանք ենք խոտանում: Չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ՝ մանրադիտակի տակով ենք անցկացնում ամեն մի արտադրանք: Ինչու պետք է ամոթով թողնենք այս գործը նախաձեռնողներին:

Իսկ նախաձեռնողն Արմեն Գալստյանն է: Ծագումով, արմատներով Սիսիանից է: Առհասարակ, սիսիանցի մեծահարուստներն իրենց կապը չեն կտրում հայրենի հողից: Հաճախ են գնում-գալիս, սիսիանցու դարդին դարման անում: Նրանք փող չեն բաժանում ընտանիքներին, դա մի պահ է բարելավում ընտանիքի սոցիալական վիճակը եւ նորից մարդիկ կանգնում են կոտրած տաշտակի առջեւ: Դրա համար էլ նրանք արմատական գործ են ձեռնարկում: Եվ ես հիշում եմ դպրոցում սովորած մի բանաստեղծության հետեւյալ տողերը՝ միրգը կերա, միրգը գնաց, իսկ իմ սիրած գիրքը մնաց: Եվ նրանք «գիրք» են ստեղծում: Արմեն Գալստյանի «գիրքն» էլ կարի այս արտադրամասն է: Նա դրանով կանանց զբաղվածության խնդիր է լուծել հայրենի Սիսիանում: Ի դեպ, նա տրիկոտաժի նման արտադրամաս ունի նաեւ Ռուսաստանում:

– Արմեն Գալստյանին շահույթը չի հետաքրքրում, – ասում է ՍՊ ընկերության գործադիր տնօրեն Արմեն Անդրեասյանը, – նրան պետք է, որ Սիսիանի կանայք գործ ունենան, կարողանան հոգալ իրենց ընտանիքի հոգսերը: Երեւի կհարցնեք՝ ինչո՞ւ հենց կանայք, որովհետեւ տղամարդիկ կարող են բանվորություն անել, իսկ կանայք... Դրա համար էլ այս արտադրամասը հիմնեց:

– Մեզ համար աշխատանքը կարեւոր է նաեւ այս տեսանկյունից՝ շփվում ենք իրար հետ, չենք «նեխում» տանը, մեզ հասարակության մեջ ավելորդ չենք զգում: Ավելորդության զգացումը թունավոր օձի է նման, որ մտավ մեջդ... Անանց է ասում: Դրա համար էլ ասում եմ՝ թող երիցս օրհնվեն ռուսաստանաբնակ մեր սիսիանցիները, որ մեզ աշխատելու, մարդ զգալու հնարավորություն են տվել:

Ժամանակակից մեքենասարքավորումներ են տեղադրվել նաեւ ձեւման արտադրամասում: Դրանք հնարավորություն են տալիս անգամ առանց մեկ միլիմետր շեղում տալու բարձրորակ ձեւվածք տալ: Իսկ դա որակյալ արտադրանք տալու կարեւոր բաղադրիչներից մեկն է: Փաթեթավորման արտադրամասում ըստ երեւույթին այդ պահին շատ էր աշխատանքը, որ որակի հսկիչներն անգամ ընդգրկված էին այդ գործում: Երեւի Ռուսաստանից նոր պատվեր է գալու: Արտադրամասում որեւէ արտադրանքի վրա պիտակ չտեսա: Կարդալով հայացքս՝ փաթեթավորողներից մեկն ասում է՝ արտադրանքն ապրանքային վերջնական տեսքի է բերվում Ռուսաստանում:

– 2013թ. հանրապետության նախագահն այցելեց մեր արտադրամաս: Եվ նա անսքող հպարտությամբ գնաց արտադրամասից, – ասում է Արմեն Անդրեասյանը, – եւ ոչ միայն այդ, մի քանի խնդիրներ կային: Նախագահը լուծեց դրանք: Դրա շնորհիվ ավելացավ աշխատողների թիվը:

Արմեն Անդրեասյանին Արմեն Գալստյանը գտավ: Վերջինիս հարկավոր էր այնպիսի մարդ, ով կկարողանար ֆինանսներն ու արտադրությունը ղեկավարել: Որտեղ արտադրություն, այնտեղ փող: Եվ որպեսզի այն զուլալ ջուրը, որով սնվում են սիսիանցի շատ ընտանիքներ, չպղտորվեր, հարկավոր էր անաչառ, ազնիվ մարդ: Այդպիսի որակներ նա գտավ Արմեն Անդրեասյանի մեջ:

Արմեն Անդրեասյանն ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել է հարկային տեսչությունում, ունեցել է սեփական բիզնես: Եվ արդեն քանի տարի է՝ ղեկավարում է այս կոլեկտիվը:

– Մեր գործերն ավելի լավ կընթանային, եթե ռուսական ռուբլու կուրսը գոնե մի քիչ բարձրանար, եթե Ռուսաստանը պատժամիջոցների տակ չլիներ: Չենք հուսահատվում, ժամանակի հետ այդ հարցերը կլուծվեն, հիմա կարեւորն այն է, որ աշխատանքի ռիթմը չգցենք, որովհետեւ սիսիանցի 58 ընտանիքի հավատի տունն է մեր ընկերությունը, սիսիանցիների համար վաղվա օրվա հանդեպ վստահությունն է այստեղ ծնվում: Նրանք կարողանում են ժամանակին աշխատավարձ ստանալ, հոգալ իրենց կոմունալ ծախսերը, մարել խանութների պարտքերը, երեխաներին դպրոց ուղարկել, – ասում է Արմեն Անդրեասյանը:

Եվ Աստծո օրհնությամբ բացվող յուրաքանչյուր օրը սիսիանցի 58 ընտանիքի համար դառնում է արարումի օր... Նրանց ընտանիքի լույսն այստեղից է սկիզբ առնում:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Մարզպետարանը պատասխանել է «Սյունյաց երկրի» հարցմանը

Սյունիքի մարզպետի մամուլի խոսնակ Վ.Սաղաթելյանը պատասխանել է «Սյունյաց երկիր» թերթի՝ Սյունիքի մարզպետին հղած հարցմանը (մարզպետարանում մուտքագրվել էր 21.07.2017թ.): Խոսքն աշնանացան ցորենի սերմացուի դիմաց 2012 եւ 2013 թվականներին առաջացած պարտքերի մասին էր:

Ենթադրելով, որ Վ.Սաղաթելյանն է տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը Սյունիքի մարզպետարանում, հրապարակում ենք նրա տրամադրած տեղեկանքը 2012թ. Սյունիքի մարզի հողօգտագործողներին հատկացված եւ 2016թ. մարված սերմացուների պարտքերի վերաբերյալ՝ ըստ շահառուների առ 27.07.2017թ.:

Տեղեկանքը ներկայացվել է մի գրության կից, որում մասնավորապես ասվում է.

«Ինչպես քանիցս հայտարարվել է, 2016 թվականին ՀՀ Սյունիքի մարզի «Զարգացման եւ ներդրման հիմնադրամ»-ի կողմից (Հոգաբարձումների խորհրդի նախագահ ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյան) մարվել է գյուղացիների՝ աշնանացան ցորենի սերմացուների 2012 թվականի պարտքն ամբողջությամբ՝ 23.174.920 (քսաներեք միլիոն հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից 250 մլն (երկու հարյուր հիսուն միլիոն) դրամ գումարի բռնագանձման պահանջով Սյունիքի մարզպետարանի դեմ ներկայացված հայցին, ապա հարկ է նշել, որ հայցադիմումը վերաբերում է 2013, 2014 եւ 2015 թվականների սերմացուների պարտքերի գումարին, բայց ոչ 2012 թվականի մարված պարտքին: Կիսելով այս դատական գործի առնչությամբ Ձեր մտահոգությունը՝ ցանկանում ենք տեղեկացնել, որ հայցվոր կողմը («Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ) դատարան է ներկայացրել հաշտության համաձայնություն կնքելու միջնորդություն՝ հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից 2012 թվականի մարված եւ 2013 թվականի մարվելիք գումարի շուրջ տարվող բանակցությունները»:

Մամուլի խոսնակը նաեւ նշել է՝ *«Անդրադառնալով Ձեր այն հայտարարությանը, թե իբր «որեւէ գյուղացի մարզում չգիտի իր պարտքի մարման մասին»՝ կխնդրեինք ներկայացնել Ձեզ հայտնի կամ Ձեր կողմից Սյունիքի մարզի բոլոր պարտապան գյուղացիների շրջանում անցկացված հարցման տվյալներ, որոնք եւ, հավանաբար, հիմք են հանդիսացել վերոնշյալ հայտարարության համար»:*

Ի գիտություն Վ.Սաղաթելյանի՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է՝ տեղեկատվության ստանալու համար *«Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը»:* Ուստի եւ անհրաժեշտ չենք համարում ներկայացնել գյուղացիների շրջանում մեր կողմից անցկացված հարցման տվյալները, որոնք հիմք են հանդիսացել վերոնշյալ հայտարարության համար:

Ստորեւ՝ Սյունիքի մարզպետարանի ներկայացրած տեղեկանքը:

Հ/հ	Համայնքի անվանումը	Շահառուի անուն ազգանուն	2012 թվական, աշնանացան ցորեն առաջին վերարտադրություն /դրամ/
1	Ուժանիս	Բեգլարյան Էդիկ	994000
	Ուժանիս	Ոսկանյան Սեդա	384000
	Ուժանիս	Սարգսյան Հակոբ	576000
2	Ն.Հանդ	Բաղդասարյան Խաչիկ	250000
3	Արծվանիկ	Անուշավան Հարությունյան	269000
4	Վարդավանք	Միրզոյան Կարինե	112000
	Վարդավանք	Կոստանդյան Գարեգին	160000
5	Կաղնուտ	Հովհաննիսյան Արտուր	480000
6	Անտառաշատ	Կարապետյան Ցոլակ	96000
7	Եղվարդ	Հարությունյան Մխիթար	30000
8	գ.Սյունիք	Սարգսյան Սամվել	505000
9	Ճակատեն	Հարությունյան Ալբերտ	8000
10	Շաղատ	Եղյան Պապի	160000
	Շաղատ	Միրզախանյան Արմենակ	160000
	Շաղատ	Միրզախանյան Հայկ	160000
11	Աղիտու	Մարգո Հայրապետյան	160000
	Աղիտու	Արշալույս Սիմոնյան	160000
	Աղիտու	Վահագն Սիմոնյան	160000
	Աղիտու	Հրաչիկ Հայրապետյան	160000
	Աղիտու	Վլադիկ Յոլչյան	160000
	Աղիտու	Մարգո Հայրապետյան	160000
	Աղիտու	Արշալույս Սիմոնյան	160000
	Աղիտու	Վահագն Սիմոնյան	160000
	Աղիտու	Հրաչիկ Հայրապետյան	160000
	Աղիտու	Վլադիկ Յոլչյան	160000
12	Թասիկ	Դավթյան Դավիթ	96000
	Թասիկ	Եսայան Գրիշա	56000
	Թասիկ	Ավանեսյան Սուրեն	56000
	Թասիկ	Դավթյան Հրաչիկ	72000
	Թասիկ	Ավանեսյան Համլետ	40000
	Թասիկ	Աղայան Ռուբիկ	96000
	Թասիկ	Սրապյան Գագիկ	32000
	Թասիկ	Հովհաննիսյան Գևորգ	48000
	Թասիկ	Սիմոնյան Մելսիկ	48000
	Թասիկ	Հովհաննիսյան Քնարիկ	88000
	Թասիկ	Եսայան Սուրիկ	48000
	Թասիկ	Սարգսյան Ռաֆիկ	56000
	Թասիկ	Սիմոնյան Ռազմիկ	40000
	Թասիկ	Աղայան Գարիկ	112000
	Թասիկ	Դավթյան Սամվել	160000
	Թասիկ	Հովհաննիսյան Խաչիկ	104000
13	Որոտան	Դավթյան Տիգրան	160000
	Որոտան	Դավթյան Վարդիկ	160000
	Որոտան	Գալստյան Հրաչիկ	160000
	Որոտան	Գալստյան Տիգրան	176000
14	Վաղատին	Սվետլանա Մարտիրոսյան	224000
	Վաղատին	Արկադիա Գրիգորյան	240000
	Վաղատին	Արմեն Գալստյան	224000
	Վաղատին	Շահեն Գրիգորյան	288000
	Վաղատին	Ջորիկ Մարտիրոսյան	128000
	Վաղատին	Ժիրայր Գրիգորյան	480000
	Վաղատին	Գևորգ Ավետիսյան	224000
	Վաղատին	Վարդան Հայրապետյան	160000
	Վաղատին	Լազր Մարտիրոսյան	64000
15	Աշոտավան	Ավանեսյան Ժորա	160000
	Աշոտավան	Բեկլարյան Արմեն	82000
16	Շուռնուխ	Արշակյան Հակոբ	80000
17	Արավուս	Քոչարյան Գրենա	195000
	Արավուս	Ջահանգիրյան Կիմա	100000
	Արավուս	Ջահանգիրյան Սերոժ	170000
	Արավուս	Մաթևոսյան Վալերիկ	170000
	Արավուս	Սինանյան Նունե	686000
	Արավուս	Ասրյան Գարուն	160000
	Արավուս	Արզումանյան Սարիբեկ	170000
	Արավուս	Ասրյան Սարմեն	100000
	Արավուս	Աղաբեկյան Արթուր	150000
	Արավուս	Մկրտչյան Գարիկ	180000
	Արավուս	Հայրապետյան Էրիկ	110000
	Արավուս	Արզումանյան Թամարա	664900
	Արավուս	Սարգսյան Արմեն	100000
18	Ակներ	Մինասյան Գառնիկ	300000
19	Ակներ	Մինասյան Էմիլ	900000
20	Հալիձոր	Գերասիմյան Մարատ	5064000
21	Տեղ	Ղուկասյան Կարո	335100
22	Բռնակոթ	Հայկ Առաքելյան Ա.	400000
	Բռնակոթ	Վարդան Հովակիմյան	160000
	Բռնակոթ	Գայանե Մարտիրոսյան Յ.	144000
	Բռնակոթ	Աշոտ Բարսամյան Գ.	272000
	Բռնակոթ	Անդրանիկ Հարությունյան Ռ.	320000
	Բռնակոթ	Արման Առաքելյան Ա.	400000
	Բռնակոթ	Տիգրան Ավանեսյան Կ.	240000
	Բռնակոթ	Արկադյա Արշակյան	576000
	Բռնակոթ	Հրաչիկ Հովհաննիսյան Կ.	320000
	Բռնակոթ	Հրաչիկ Թանգյան Բ.	160000
	Բռնակոթ	Արտակ Սիսակյան	169920
	Բռնակոթ	Սեյրան Կարապետյան Ս.	160000
	Բռնակոթ	Վլադիկ Հովհաննիսյան Ա.	192000
		Ընդամենը	23174920

Մարզի փրկարարական ծառայության վարչությունը նոր պետ ունի

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական ծառայության վարչությունը հուլիսի 6-ից ղեկավարում է փրկարար ծառայության փոխգնդապետ Անդրանիկ Սահակյանը:

Ծնվել է 1981թ. մայիսի 25-ին Գորիս քաղաքում: 1998թ. ավարտել է Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գորիսի մասնաճյուղի մանկավարժական դեպարտամենտը: 2002-04թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Զորացրվելուց հետո 2005 թվականից աշխատել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Գորիսի բաժնում մինչեւ 2013 թվականի վերջը: 2014թ. հունվարին նշանակվել է Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար: 2017թ. հուլիսին նշանակվել է Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

Նորանշանակ պետը ծանոթացել է անձնակազմի հետ, ուսումնասիրել վարչության հիմնախնդիրները, նախանշել անելիքները, մանավանդ անձնակազմի պատրաստականության մակարդակն էլ ավելի բարձրացնելու առումով, թեպետ վարչությունը համարում է նորմալ կայացած կառույց: Դա լինելու է դասընթացների տեսքով, ինչպես մարզային վարչությունում, այնպես էլ ճգնաժամային կառավարման ակադեմիայում: Ինչպես **«Սյունյաց երկրին»** փոխանցեց Անդրանիկ Սահակյանը, առաջնահերթ խնդիրը Մեղրու հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի թափուր տեղը շուտափույթ լրացնելն է: Մեղրու տարածաշրջանի հրշեջ-փրկարարական ջոկատում հրշեջ-փրկարարի տասը թափուր տեղ կա (40 տեղից 30-ն է համալրված): Աշխատանքներ են տարվում թափուր տեղերը լրացնել կարող ուժերով, որ փրկարարական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպվեն: Միջոցներ են ձեռնարկվում լրացուցիչ հենակետեր բացելու ուղղությամբ՝ որեւէ պատահարի դեպքում բնակչությանն ավելի մոտ լինելու, օպերատիվորեն արձագանքելու եւ օգնության հասնելու համար:

Մարզային փրկարարական ծառայության վարչության շենքային բարելավման խնդիրներ

Նորդուզ-Մեղրի դարպասի համատեղ օգտագործումը միտված է մեծացնելու հայ-իրանական առեւտրաշրջանառության ծավալը

Նորդուզ-Մեղրի դարպասի համատեղ օգտագործման օրինագծի հիմնական նպատակն է Իրանի եւ Հայաստանի միջեւ հեռանկարային տնտեսական համաձայնությունները կյանքի կոչելը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հուլիսի 24-ին լրագրողների հետ զրույցում նման կարծիք հայտնեց իրանագետ Արմեն Իսրայելյանը:

«Դա վերաբերվում է երկկողմ առեւտրաշրջանառության ծավալների մեծացմանը եւ տնտեսական ոլորտում տարբեր ծրագրերի իրականացմանը: Նորդուզ-Մեղրի դարպասի համատեղ օգտագործումը միտված է նաեւ տարանցիկ բեռնափոխադրումների իրականացմանը, մասնավորապես՝ Պարսից ծոցից Սեւ ծով իրականացվող բեռնափոխադրումները», – ասաց իրանագետը՝ հավելելով, որ Նորդուզ-Մեղրի դարպասի համատեղ օգտագործումը կբարձրացնի նաև երկու երկրների գրավչությունը միջազգային ներդրողների համար:

Իրանագետի խոսքով՝ որպեսզի կրկնակի գործողություններ չկատարվեն Հայաստան-Իրան սահմանային անցակետերում եւ մաքսային գործընթացներն արագ ձեւակերպվեն համատեղ աշխատանքային խումբ է ստեղծվելու, ովքեր կապահովեն քաղաքացիների արագ սպասարկումը:

«Բացի այդ, Հայաստանը եւ Իրանը միմյանց կփոխանցեն մաքսանենգության վերաբերյալ տեղեկությունները, որպեսզի սահմանում ի հայտ եկած խնդիրները շատ կարճ ժամանակում իրենց լուծումը ստանան», – նշեց Իսրայելյանը:

Իրանագետը նշեց, որ վերջին տարիներին Իրանի եւ Հայաստանի միջեւ առեւտրաշրջանառության զգալի աճ է նկատվել: Եթե 2015 թվականին երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալները (ոչ նավթային ապրանքների) կազմել է 120-130 միլիոն դոլար, ապա 2016 թվականին այն կազմել է 170 միլիոն դոլար:

«Վերջին 1-2 տարում տնտեսական ոլորտում մի շարք գործընթացներ տեղի ունեցան՝ Իրանի եւ Հայաստանի միջեւ վիզային ռեժիմը չեղյալ հայտարարվեց, Հայաստանից Իրան մուտք գործող մեքենաների համար սահմանված 500 դոլար երաշխիքային գումարը վերանայվեց եւ ներկայումս այն կազմում է 90 դոլար եւ այլն: Այս ամենը նաեւ նպաստեց Հայաստանում զբոսաշրջության ոլորտում որոշակի աճին», – ասաց Իսրայելյանը:

Ըստ իրանագետի՝ Սյունիքում ազատ տնտեսական գոտի հիմնելու վերաբերյալ որոշումը եւս կնպաստի երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալի մեծացմանը:

24 հուլիս, 2017,
armenpress.am

Կան Մեղրիում եւ Սիսիանում: Տարբեր ծրագրերի, նաեւ վարչության աշխատակիցների միջոցով ձգտում են լրացնել բացը:

Ա.Սահակյանի պաշտոնավարության կարճ ժամանակամիջոցում հիմնականում հրդեհներ են գրանցվել: Առաջիկայում, ըստ օդերեւութաբանների կանխատեսումների, շոգն ավելի է սաստկանալու, ուստի սպասվում է ավելի բարձի կարգի հրդեհավտանգ վիճակ: Այդ առիթով վարչության պետը կոչ արեց մարզի բնակիչներին դրսեւորել զգոնություն եւ զգուշություն. *«Տարբեր տեղերում հրդեհներ են ծագում, աղբակույտերի հրդեհման դեպքեր են գրանցվել, չգիտեմ՝ ինչով է պայմանավորված, նորություն է մեզ համար, եւ քաղաքի կենտրոնական հատվածներում եւ ծայրամասերում նման խնդիրներ են ծագում: Համագործակցում ենք անտառտնտեսության աշխատակիցների հետ, անտառամերձ հատվածներում նրանք մեզ օգնում են, աջակցում են, մենք էլ նրանց ենք օժանդակում, համատեղ ուժերով փորձում ենք արդյունքի հասնել: Իսկ աղբակուտակների հրդեհման 12-13 դեպք է եղել, որ նախկինում չի գրանցվել: Թերեւս հակահրդեհային տեսչությունն իր գնահատականը կտա: Ուզում եմ հորդորել բնակչությանը, որ ինքնագործունեությամբ չզբաղվեն: Որովհետեւ մեծ ռեսուրս ենք ծախսում, տրանսպորտային միջոցներ ենք օգտագործում, ուժերի փոշիացում է լինում, մեր հիմնական գործը թողած՝ մի քանի կարգազանցի անպատասխանատվության հետքերն ենք վերացնում»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

ՏԵՍ ՆԱԵՎ՝ ԷՋ 8

Գլխավոր դատախազից խնդրում են պարզել՝ արդյո՞ք բնապահպանների դեմ արշավը կազմակերպել է Սյունիքի մարզպետը

Էջ 2 անձանց պետական ռեգիստրի տվյալներով 2017թ. մարտի 24-ից սկսած «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահը Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի կինը՝ էլիզաբեթ Պետրոսյանն է: 2017թ. ապրիլի 5-ին թարմացված տվյալների համաձայն՝ նույն ընկերության վեբ-կայքի համար որպես ադմինիստրատիվ եւ տեխնիկական կոնտակտ է նշված տիկին Պետրոսյանը: Մինչ ապրիլի 5-ի փոփոխությունը «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության վեբ-կայքի ադմինիստրատիվ եւ տեխնիկական կոնտակտ էր նշված «Հասարակության ձայն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Բաբկեն Հարությունյանը, ինչը վկայում է այս երկու հասարակական միավորումների գործառնական փոխկապակցվածության մասին:

Նշված փաստաթղթերն էլիզաբեթ Պետրոսյանին կարող էր տրամադրել միայն գործարքի երկու կողմերից մեկը: Կան հիմնավոր կասկածներ պնդելու, որ մարզպետ Հակոբյանը, անձնական եւ խմբային շահերից ելնելով, կատարել է մարզպետի լիազորությունների հետ անհամատեղելի արարք՝ իր հետ փոխկապակցված անձանց միջոցով հաշվեհարդար տեսնելով հասարակական-բնապահպանական գործունեությամբ զբաղված անհատների եւ կազմակերպությունների հետ: Նշված արարքն էական վնաս է պատճառել հասարակական կազմակերպություններին եւ պետությանը: Նախ՝ քաղաքացիական հասարակության գործունեությանը վարչական մարմնի միջամտության պատճառով անհնարին է դառնում ԱՆԹՆ-ին անդամակցելու՝ Հայաստանի հետագա հնարավորությունը, եւ Հայաստանը զրկվում է այդ նախաձեռնությանն անդամակցելու պայմանով միջազգային ֆինանսական աջակցությունից: Երկրորդ, մարզպետի հետ փոխկապակցված այլ սուբյեկտների ձեռքով նպատակամղված վարկաբեկվում են մարզպետի համար անհաճո հասարակական կազմակերպություններն ու հանրային գործունեությամբ զբաղվող անձինք՝ էական վնաս պատճառելով վերջիններիս հեղինակությանը:

«Ամփոփելով նշված փաստական հանգամանքները՝ կարծում եմ, որ հանցագործության մասին ներկայացված հաղորդման շրջանակներում անհրաժեշտ է պարզել Սյունիքի մարզպետ Վահե Ալբերտի Հակոբյանի կապը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության եւ դրան կից բարեգործական հիմնադրամի, ինչպես նաեւ Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի» շրջանակներում իրականացված ֆինանսական գործարքների հետ: Պարզել անձնական եւ խմբային շահերից ելնելով՝ վերը նշված հիմնադրամների միջոցների օգտագործման հնարավոր փաստերը՝ իր կնոջ կողմից ղեկավարվող հասարակական կազմակերպության եւ դրա հետ փոխկապակցված այլ կազմակերպությունների եւ անձանց միջոցով:

Թվարկված գործողություններն անհամատեղելի են մարզպետի պաշտոնեական լիազորությունների հետ եւ առաջացրել են հանրային սուր լարվածություն: Ելնելով գործի դրվագներից՝ խնդրում եմ հաղորդման քննությունն ուղարկել ըստ ենթակայության: Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ տրամադրել գործի վարույթի համար կարեւոր լրացուցիչ նյութեր», - նշել է Գրիգորյանը:

asekose.am, *2017-08-01*

Սյունիքի մարզպետն ընտրություններին տված խոստումը չի կատարել. «քցված» անապահով ընտանիքի ահազանգը

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Գորիսի հարակից Ներքին Խնձորեսկ համայնքում սոցիալապես անապահով, դոմիկում ապրող կնոջը խոստացել է ձայն բերելու դիմաց բնակարան գնել, սակայն մինչ օրս մարզպետը խոստումը չի կատարել:

«Ես անապահով ընտանիք եմ, ունեմ 4 անչափահաս երեխա: Ապրում եմ դոմիկում՝ փայտից տնակում: Ընտրությունների ժամանակ Վահե Հակոբյանը մեզ խոստացավ տուն գնել, սակայն մինչ օրս խոստումը չի կատարել: Մարզպետն անձամբ խոստացավ, որ եթե շատ ձայն հավաքեմ, 10 հազար դոլարի սահմաններում գյուղում տունը կառնի: Հետո ասեց՝ 10 հազարը քանկ է, 5 հազարի սահմաններում կառնեմ: Պայմանավորվեցինք: Ես 40 ձայն հավաքեցի, սրան-նրան խնդրեցի, չէին համաձայնում, բոլորը փող էին ուզում ձայնի դիմաց: Բայց 40 ձայն հավաքեցի, 70-80 հազար դրամ փող ծախսեցի տրանսպորտի վրա, գնացի-եկա, բարեկամներիս համոզեցի, ձայները հավաքեցի, տարա, ներկայացրեցի, բայց նա խոստումը չկատարեց», – «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում ասաց Լուսինե Սարգսյանը:

Լուսինեն խորհրդարանական ընտրություններից հետո փորձել է ամեն կերպ կապվել մարզպետի հետ, պահանջել-խնդրել, որպեսզի խոստումը կատարի, բայց չի ստացվում: *«Գորիսում նա օգնական ունի: Զանգահարում եմ իրեն՝ մեկ ասում է, որ մարզպետն արտասահմանում է, մեկ՝ գործերով խառն է: Ոչ մի կերպ չի ստացվում նրան գտնել: Ստացվում է, որ ես իրենց համար ձայներ ապահովեցի, բայց իրենք ինձ 10 դրամի օգուտ չտվեցին»,* – ասաց կինը:

Մեր դիտարկմանը, թե չի՞ կարծում, որ իր արածը այնքան էլ օրինական չէ, եւ մարզպետի հետ նախընտրական շրջանում ձայների փոխարեն բնակարան ուզելու փոխարեն կարելի էր այլ ճանապարհով հասնել խնդրի լուծման, մանավանդ, որ սոցիալապես անապահով են եւ հատուկ կարգավիճակ ունեն, տիկինը պատասխանեց. *«Գիտեք, ես 4 անչափահաս երեխա ունեմ, ամեն օր հիվանդանոցներում եմ: Տան պայմաններից երեխաներս թոքաբորբով հիվանդ են: Հենց հիմա էլ ես եմ բուժվում հիվանդանոցում թոքաբորբից: Ամռանը շատ տաք է, օձեր են մտնում ներս, իսկ ձմռանը՝ ահավոր ցուրտ: Ամուսինս ապրիլյան պատերազմի մասնակից է: Ի վիճակի չէ աշխատել: Ես ուրիշ ինչ կարող եմ անել»,* – ասաց Լուսինեն:

Ի դեպ, մարզպետ Վահե Հակոբյանը տիկնոջը միայն բնակարան չի խոստացել: Խոստացել է նաեւ նրա նպաստի հարցը լուծել, սակայն այդ խոստումն էլ չի կատարել: *«Նախընտրական այդ հանդիպման ժամանակ դահլիճում լիքը մարդ կար՝ գյուղապետեր, բնակիչներ: Բոլորի ներկայությամբ Վահե Հակոբյանն ասաց՝ մի մտածեք, ես խոստանում եմ, որ համ ձեր բնակարանի հարցը կլուծեմ, համ միանվագ նպաստի: Ասաց, որ ամեն ինչ կանի, որ իմ երեխաները ապահով ապրեն: Բայց մինչ օրս ոչ տունը կա, ոչ էլ նպաստը: Ասեցի՝ լավ, տունը չեք առնում, գոնե նպաստիս հարցը լուծեք, էդ մի քանի կոպեկը ստանամ, բայց դա էլ չարեցին: Գորիսի քաղաքապետարանից 20 հազար դրամով օգնեցին, բերեցինք դոմիկի պատալոկն ամրացրեցինք, որ օձերը տուն չմտնեն, որ երեխեքս չվախենան»,* – ասաց Լուսինեն:

Նա կատարվածի մասին նամակ է գրել, կցել դոմիկի լուսանկարները եւ ուղարկել վարչապետ Կարեն Կարապետյանին, սակայն ինչպես մարզպետ Վահե Հակոբյանը, այնպես էլ վարչապետ Կարեն Կարապետյանը որեւէ կերպ չեն պատասխանել, չեն արձագանքել տիկնոջ նամակներին ու զանգերին:

Մեզ նույնպես չհաջողվեց կապվել մարզպետ Վահե Հակոբյանի հետ՝ պարզելու, թե ինչու չի կատարում իր «նախընտրական խոստումը»: Մեր բոլոր զանգերն անպատասխան մնացին:

1in.am
2017.07.27

Մխիթար սպարապետի գերեզման տանող նորակառույց ճանապարհը

Ոսկեղենիկ զրույց մեր պատմության, Հին Խնձորեսկի, մշակութային գերկենտրոնացած Երեւանի, աղաղակող թռչունների մասին

Ծննդով խնձորեսկցի գործարար Ժորա Ալեքսանյանի մասին առաջին անգամ եմ գրում եւ զարմանում եմ, որ լրագրական գործունեության ընթացքում առիթ չեմ ունեցել նրան հանդիպելու: Ինչպես ասում են՝ ճրագը տակը լույս չի տալիս: Նաեւ ասում են՝ լավ է ուշ, քան՝ երբեք:

Մյուս կողմից էլ՝ նրան արդեն այնքան լավ գիտեն հանրապետությունում, այնքան շատ են գրել խնձորեսկցի Ժորայի եւ նրա նախագծով ու նախաձեռնությամբ կառուցված, 160 մետր երկարություն, 63 մետր բարձրություն ունեցող եւ 20 տոննա կշռող կամրջի մասին, որ, թվում է, նոր բան ասելն այնքան էլ հեշտ չէ:

Շատերն են տեղյակ նաեւ Մխիթար սպարապետի գերեզման տանող 160 մետր երկարությամբ ձգվող նոր ճանապարհի եւ 120 մետր անդունդաբաժան ցանկապատի մասին եւ, խոստովանենք, եթե ոչ վաղ անցյալում մագլցելով, դժվարություններ հաղթահարելով էինք այցելում սպարապետի գերեզման, հիմա արդեն՝ հեշտ ու անվտանգ է դարձել այն:

Բարեբախտաբար, կյանքը հոսում է, եւ ամեն ակնթարթն է նորություն, չասեմ՝ մարտահրավեր, բայց այդպիսի մի բան՝ մշակութային մարտահրավեր:

Ինչպե՞ս եմ ճանաչել Ժորա Ալեքսանյանին. նախ՝ որպես մանկության թաղամասի ու շենքի փեսա, այստեղից էլ՝ վախենամ, որ նրա մասին զրույցս ընդունված լրագրական չափանիշներից դուրս ստացվի, ինչից Ժորա Ալեքսանյանը չի նեղվի, նա շատ բան է տեսել իր կյանքում, շատերի հետ շփվել, լավն ու վատը չափել եւ էլի պատրաստ է ամենքից ու ամեն տեսակի վերուվարների: Միայն թե արդյունքում՝ վարուվերներ լինեն…

Նա կռիվ է տվել քար ու հողի հետ՝ ծննդավայրի մեռած տների, իրեն կանչող հարազատ թաղի կենդանության համար, իսկ դա տեսակի մեջ ցավի ու հույսի սեպագրություն է, եւ միայն առաջին հայացքից է շինարարարարություն կոչվում:

Ժորա Ալեքսանյանը մեծ ցատկ է կատարել բիզնեսի ոլորտից՝ հոգեւոր-մշակութային աշխարհ, ինչն ինձ համար էլ անսպասելի էր, եւ միայն տեսնելով, մանավանդ, մեղքս չթաքցնեմ, առաջին անգամ տեսնելով կարելի է պատկերացնել:

Դառնամ սկզբին. Ժորան մեր թաղի ու շենքի փեսա է, ում ի վերուստ հենց այդպես էլ ճանաչում էի: Կարեւոր բաղադրիչ, քանի որ մանկության պատկերացումներն ամենահստակն ու ճշգրիտն են: Ահա, շենքիս այս պատվավոր, հին ու բարի հարեւաններն իրենց դստերը վստահել են նրան: Մանկության հիշողության մեջ շենքիդ առաջին հարսանիքը, սպիտակ քողերի մեջ հազիվ երեւացող հարս ու փեսայի ուրվագիծն անջնջելի եւ պարզորոշ մնում է իբրեւ թանկ պահուստ:

Հետո արդեն Ժորային տեսնումլսում էի տարբեր գործերում՝ մինչեւ շրջանի հաց ու հացահատկի արտադրության ոլորտի գործարար:

Այսքանը: Վերջին տարիներին էլ լսելով ու կարդալով՝ Ժորան հարություն է տվել Հին Խնձորեսկին, նրա քարանձավ-բուրգերին, Հին Խնձորեսկի երկու ափը միացնող՝ տեսակի մեջ բացառիկ կամուրջ է կառուցել: Ժորան Մխիթար սպարապետի գերեզման տանող ճանապարհն է վերջերս կառուցել, եւ այստեղ ամենեւին կարեւոր չէ՝ գտնվե՞լ է բարեսիրտ հովանավոր, թե՞ ոչ: Նա չի ահազանգել, չի փնտրել, եկել ու փարիզեցի պապիկն ու մոսկվայաբնակ ախալքալաքցի էդգար Արամյանը նրան գտել են: Կարեւորը՝ շնորհակալությամբ է նրանց հիշում, նույնիսկ անունները է ցուցանակել եւ փակցրել թանգարանքարանձավի տարածքում:

Ժորա Ալեքսանյան

Ժորան շնորհակալ լինող մարդ է, նա իր ու իր պապի համար չի կառուցել այս կամուրջն ու ճանապարհը, մաքրել ու պայծառացրել Մխիթար սպարապետի պանթեոնի մերձակայքի ավերված եկեղեցու ու դպրոցի, քարանձավ-տների ներսն ու շրջակայքը, կենցաղ ու մշակույթ, ճարտարապետություն վեր հանել:

Հիմա էլ իր ստեղծածով հասել է նրան, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանն այստեղ այցելելով՝ ցնցվել, միանգամից սահմանել է սպարապետի հիշատակի ոգեկոչման ամենամյա օգոստոսյան փառատոն, որն ավելի կնպաստի ամրագրելու մեր երկրամասի այս փոքրիկ լեռնային զանգվածի փառքն ու պատմական նշանակությունը:

Ժորան իրոք ազգային նշանակության գործ է արել. ահա առաջին տպավորությունս, որով էլ սկսվեց մեր զրույցը՝ նրան մեր թաղի պատվավոր փեսայի կոչում շնորհելու լրջախառն հումորով:

Անկեղծ լինելու համար ասեմ, որ այսպես խորությամբ չեմ մտաբերել ու մտածել Ժորայի ու նրա կատարածի շուրջ: Գուցե մասնագիտական այլ բնագավառն էր պատճառը, որն ամենակուլ է եւ պահանջում է կատարյալ զոհաբերում: Բայց ահա, կյանքը բերում, նորից առերես է անում քո բնաշխարհի ու նրա արարող մարդկանց հետ, ինչից իրականում չես էլ հեռացել, հուշում, որ միայն զենքով ու զինվորով չենք ապրում, որ մեր ուժի երաշխիքը միայն մետաղից, խստականոն հրամանատարից եւ կռվող մարտիկից չէ ձուլված՝ պարտադիր սահմաններ հսկող:

Սահման ասվածն էլ հարաբերական է. եթե սահմանից այսդին ապրող հայը, թեկուզ հենց Ժորան, Հին Խնձորեսկի քահանայի տան փայտե դուռն ու պեղված իրերն ու կարպետը շալակած չբերի, չհասցնի իր քարանձավ-թանգարանի մուտքը՝ մարդկանց ի տես, աշխարհին ի տես եւ չասի՝ սա էլ մենք ու մեր դարերը, սահմանն էլ կկորցնի իր իմաստը, կդառնա ծիծաղելի եւ վասն ոչնչի գիծ:

Մեր պահած սահմանը, ողջ բանակի պահած սահմանը սնվում եւ կարեւորվում է, ավելին՝ ամրապնդվում է թիկունքի զորությամբ, գոյությամբ եւ ոչ բացակա ներկայությամբ:

Գիտենք այս ամենը, չի խանգարում նորից իմանալը: Թե չէ՝ հպանցիկ, խառնակ ժամանակի մեջ հոսելով մտածում ես՝ մարդ է, կառուցել է, լավ է արել, ապրի ինքը եւ անցնում առաջ՝ քո գործին: Գուցե նաեւ հետին պլանով մտածես՝ գործարար աշխարհի մարդ է, գործարար շահեր կհետապնդի… Փույթ չէ, թող հետապնդի՝ ազգանպաստ կառուցելով:

Իսկ Ժորան հաստատ բացակա ներկայություն չէ, օրական հարյուր անգամ բարձրանում-իջնում է գլխիվայր ճանապահներով, քանի որ բոլոր այստեղ այցելողներին էլ ասելիք ունի, բոլորն էլ հարազատ, ծանոթ մարդիկ են, նորեկներին էլ մեր պատմությանը ծանոթացնել է պետք՝ թեկուզ երկու բառով, որպեսզի ողջ կյանքում չմոռանա, որ Լեռնահայաստանի հայը՝ բնիկ եւ մի քանի հազար տարեկան է, մշակութատեր է…

Այս ամենը Ժորան գիտի եւ ուզում է ամեն անցնող-դարձողի պատմել: Ավելին, գիտի մեր տարածքում Դավիթ-Բեկին օգնության հասած Սպարապետի ու նրա մղած կռիվների մասին, Հին Խնձորեսկում Սպարապետի զորակայան դարձած բերդի ամեն քարի, գյուղ եկած Աբրահամ Կրետացի կաթողիկոսի՝ ծննդավայրի մասին գրառումների, հին խնձորեսկցու պատմամշակութային արժեքներ- վերջին բահի եւ օրորոցի, հացի սեղանի, նրա կոտրված ոտքի տեղն էլ գիտե:

Նա նույնիսկ գիտի, թե ինչպես են երկու հսկա՝ Մխիթար եւ Դավիթ Բեկ զորապետները մի օր վիճել ու կռվել ազգի խնդրահարույց հարցի շուրջ: Շատ բան գիտե Ժորան, եւ զարմանալի էլ չէ՝ կառուցելով կամուրջը՝ նա արդեն իսկ նպատակ ուներ գյուղի անցյալն ու պատմությունը ներկայացնել, որն էլ դարերի կարեւոր խաչմերուկում առնչվում էր տարածքում Սպարապետի ու նրա շուրջը ծավալված պատմական դեպքերին, ինչուներին եւ ինչպեսներին:

Այսպես ասենք, Ժորան քաշել է առասպելական Արիադնայի թելը, եւ այնտեղից դուրս է եկել մի ողջ հին ու հերոսական աշխարհ, եւ ահա այդ աշխարհն իր պատմաբան ընկերների պատմածով եւ օգնությամբ ուսումնասիրել եւ ուզում է ներկայացնել միջազգային հանրությանը:

Չմոռանանք, Ժորան նաեւ գործարար է, այն էլ՝ երդվյալ գործարար, նա չի կարող հոգ տանելով պատմության մասին, մոռանալ նրա մյուս կողմը՝ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացումը, տարեկան շուրջ 150 հազար զբոսաշրջիկի սնվելու, հանգստանալու, քնելու հարցերը:

Եվ Ժորան պարզ հաշվարկ է կատարում՝ տարեկան մեզ այցելող այդքան զբոսաշրջիկից 100-120 հազար հոգին գնում եւ մնում են Գորիսի հյուրատներում: Խնձորեսկ զբոսավայրն ու հանգստի գոտին, փաստորեն, պատճառ են դառնում, որպեսզի Գորիս քաղաք մուտք գործի տարեկան մի քանի հարյուր միլիոն դրամ:

Այսինքն՝ կարելի է ասել, Խնձորեսկ հնավայր-զբոսավայրը ոչ միայն իր պատմական նշանակությամբ է հսկայական, նաեւ՝ իր բերած եկամուտով:

Պարզից էլ պարզ է՝ Ժորան մնացել է իր իսկ ստեղծած ազգային մեծության արժեքի բեռան հետ մեն-մենակ եւ նրա տակ՝ ճկած: Իրոք, մի՞թե մի ողջ լեռնային գոտու հնավայրն ու պատմությունը պահպանելը, դրանից բխող զբոսաշրջության հոգսերը մեկ մարդու գործ են. ահա հարցերի հարցը:

Լսենք Ժորա Ալեքսանյանին.

– Կամուրջի շինարարությունն իրականացվել է տեղացի մասնագետների ուժերով: Շնորհակալ եմ բոլորից:

Այն ավարտուն տեսքի բերելու համար ներդրվել է 13 միլիոն դրամ: Շինարարության համար օգտագործվել է 15 տ մետաղյա կառուցվածքներ, 2200 մ տարբեր տրամաչափի պողպատե ճոպաններ:

Ճոճվող կամուրջը, համոզված եմ, տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ կբացի: Կամրջի հմայքը ոչ միայն իմ ծննդավայրին հարություն տալն էր, Հին Խնձորեսկի Ներքին թաղը հանդիպակաց ափի հետ կապելը, նաեւ՝ զբոսաշրջիկներին հնարավորություն է տալիս հիանալ բնության գեղեցկությամբ, հին խնձորեսկցիների կացա-

րան-քարայրներով, 15-17-րդ դարերում կառուցված, ձորերի մեջ գտնվող 4 եկեղեցիով:

Հին Խնձորեսկցիներս գիտենք, որ նախկինում թաղամասից թաղամաս գնալու համար մարդիկ անցել են ձորերով ու նեղ արահետներով, կտրել առնվազն 6 կիլոմետր ճանապարհ: Հիմա դա կարող են անցնել բոպեների մեջ՝ դիտելով հնավայրի ողջ տեսարանը, ծանոթանալով նրան:

Յոթ ամիս է, ինչ Հին Խնձորեսկի պահպանման հիմնադրամ եմ ստեղծել զբոսավայրի տարածքում, ահա այն, տեսնում եք: Զբոսաշրջիկը կամ այցելուն կարող է իր կամքով, իր նախատեսած չափով այնտեղ դրամ թողնել: Սա աշխարհում ընդունված քաղաքակիրթ կարգ է, որով մենք մինչեւ հիմա կարողացել ենք վճարել երկու բանվորի՝ շրջակայքը մաքրելու, հողային որոշ աշխատանքներ կատարելու համար:

Այստեղ ամեն ինչ անվճար է՝ չհաշված այս փոքրիկ, ճանապարհականգառ բացօթյա սրճարանը, որտեղ կարող են ճաշակել նաեւ գյուղի որոշ բարիքներ:

Այս պահին էլ պատրաստ եմ մեծ սիրով այս ողջ հնավայր-համալիրի հետագա պահպանությունն ու խնամքը հանձնել որեւէ սրտացավ, շահագրգիռ գործարարի, ով հիմնադրամին ներ կդնի 500.000 դոլար եւ ավելի մեծ ու հեռանկարային աշխատանքներ կտանի պատմական զբոսավայրի պահպանման, զարգացման ուղղությամբ:

Ափսոս չէ՞, որ այսքան կատարվածը մի օր կորչի, ի չիք դառնան մեր ծրագրերն ու երազանքները: Ոչ մեկս էլ հավերժ չենք, բոլորս էլ մի օր լքելու ենք այս աշխարհը, որքանո՞վ եմ վստահ, որ իմ զավակներն այս նույն ոգեւորությամբ կշարունակեն գործը: Չէ՞ որ բացի ազգային նշանակության լինելուց՝ այն նաեւ չափազանց ծախսատար է, պահանջում է հետեւողական, ամենօրյա հոգածություն:

Կնվիրեմ ամբողջությամբ, կօրհնեմ այդ գործարարին, ծրագրերս ու փորձս էլ կփոխանցեմ, միայն թող նա հայտնվի: Կարծում եմ, սկզբի համար քիչ գործ չէ կատարված. շուրջ 13 միլիոն դրամ է ներդրվել, 4 միլիոն դրամ էլ մոսկվայաբնակ բարերար է տրամադրել ճանապարհակառուցմանը, հիմքն ամուր է դրված, պահպանված են կամուրջի կառուցման բոլոր միջազգային չափանիշները, այն իր տեսակի մեջ, ասեմ, կամուրջների մետիս եմ համարում:

Իսկ Սպարապետի պանթեոն տանող ճանապարհը ոչ միայն գեղագիտորեն է կառուցված, նաեւ՝ ճիշտ շինարարությամբ, պատմականորեն պահպանված է բնական վիճակը. բետոնից չի արվել, հնություններին ձեռք չեմ տվել՝ դրանք թողնելով մշակույթի նախարարության հետագա ուսումնասիրությանը:

Այնպես որ, ոչ մի լումա ինձ պետք չէ, միայն՝ բարի շարունակություն եւ՝ զբոսավայրում աշխատատեղերի բացում: Իսկ ես այս գոտում շուրջ 200 աշխատատեղի կարիքն ու հնարավորությունը տեսնում եմ:

Ի դեպ, կուզեի ի լուր անտեղյակների ասել. սա երբեք էլ բիզնես չի եղել ինձ համար, հետեւապես՝ այն մաքուր գործ է, չարժե վատ խոսք ասել լավ գործին: Մինչեւ այս պահս իմ միջոցներով, այսպես ասած, յոլա եմ տարել ու եւ էլի յոլա եմ տանում կառուցված գոտին, երբեք չեմ գովազդել ինձ կատարածս, որեւէ մեկին չեմ պարտադրել այս կամ այն գործը, որքան կարողացել եմ, որքան հնարավորությունս ներել է, այդքանն էլ արել եմ, գուցե հնարավորություններից՝ մի բան էլ ավելի:

Քարանձավ-թանգարանում նստած Ժորան մի սրտառուչ պատմություն էլ է պատմում.

- Վերջերս այստեղ եկավ մի տարեց կին՝ ութսունն անց տատիկ: Ուշադիր զննում էր քարանձավը, կարծես թե՝ արտասվում: Մոտեցա, նա ինձ անմիջապես ճանաչեց: Կինն ինձ հիշում էր իմ մանկությունից: Պարզվեց՝ նա ապրել է այս քարանձավում՝ ամուսնու քսանվեց հոգանոց գերդաստանի հետ, եւ ինքը չորս եղբայրներից ամենափոքրի կինն է եղել: Նա հուզված ցույց տվեց այն առանձնացված տեղը, որտեղ ինքն ու ամուսինը քնում էին. օջախին մոտ, խոհանոց կոչվող տարածքում:

Տատիկը շնորհակալություն հայտնեց իրենց քարանձավ-բնակարանը մաքրելու, կարգի բերելու, վերակենդանացնելու համար եւ պատերը համբուրելով՝ գնաց:

Ահա այսպիսի տասնյակ գեղեցիկ պատմություններ կան մարդկանց հիշողությունների մեջ, ինչո՞ւ կորչեն, եւ սերունդները տեղյակ չլինեն իրենց պապերի պատմությանը:

Զրույցին միջամտում եւ իր կարծիքն է հայտնում «Այունյաց երկիր» թերթի խմբագիր, տարածաշրջանի ամեն քար ու թփին, մեր պատմության հին ու նոր անցքերին, դեմքերին եւ ճակատագրերին քաջածանոթ Սամվել Ալեքսանյանը: Ի դեպ, լրագրող եւ խմբագիր լինելուց առաջ, նա անառարկելի պատմաբան է, պատմության, մեր պատմագիր-վիպագիրների ամենակուլ իմաստասեր-ուսումնասիրող, ում հզոր փաստարկներին, մեկ անգամ չեմ համոզվել, հնարավոր չէ ուղղակի ընդդիմանալ:

Նրա կարծիքն այս հարցում էլ համոզիչ է հնչում.

«Կգա պատմական մի հանգրվան, հիշեք, երբ այս տարածքը կառնվի պետական հովանու ներքո, եւ դա ամենեւին Ժորայի, կամրջի կամ Հին Խնձորեսկի քարանձավի խնդիրը չէ: Սա այլեւս դուրս է մասնավոր հետաքրքրությունների տիրույթից եւ իր հսկա նշանակությամբ՝ պետական ու ազգային, մշակութային գործ է:

Կարեւոր չէ՝ ինչ կկոչվի այն. Խնձորեսկի հնավա՞յր, թե՞ մեկ այլ անվամբ, կարեւորը նրա էությունն ի նպաստ երկրամասի ու երկրի ծառայեցնելն է:

Տաթեւի ճոպանուղին այս առումով ապահովվագրված է, վերահսկող եւ պատասխանատու կազմակերպություն կա, իսկ այստե՞ղ:

Համոզված եմ, վաղ թե ուշ կգիտակցվի, որ այս վայրը Լեռնահայաստանի մի շատ կարեւոր պատմական գոտի է, սրբատեղի, որտեղ դեռ 90-ականներին մեր կամավորական ջոկատներն են մարտի գնալուց առաջ եկել ու երդում տվել, հենց մեկը՝ «Քոլատակ» ջոկատի տղաները՝ Սուրեն Բաղդասարյանի հրամանատարությամբ, ուժ ստացել…

Պատեհ-անպատեհ առիթներով մշակույթի նախարարությունը բաց թանգարանի, տուն-թանգարանի կոչումներ է շռայլում, մշակութային քաղաքականությունը գերկենտրոնացած է Երեւանում, մինչդեռ՝ ազգի պատմությունը, նրա պատմամշակութային արժեքները, ճարտարապետությունը մարգերում է առավելապես:

Ահա պատճառներից մեկն էլ, որ մեր հակառակորդն այդ ոլորտում հաղթանակներ է գրանցում՝ մեկ հզոր եւ, այսպես ասած, ազգասեր հովանավորով մի հասարակ գորգի մասին տեսաերիզ է թողարկում եւ դրանով ողողում աշխարհը: Որքան էլ այն շինծու լինի…

Կարծիքս մեկն է՝ Խնձորեսկ հնավայրը ոչնչով չի զիջում մեր հանրապետության որեւէ հնավայրի, նրան պետք է պետական կարգավիճակ տալ, առնել պետության հոգածության ներքո: Ժորա Ալեքսանյանը շատ լավ առիթ է ստեղծել մեր երկրամասը աշխարհին ներկայացնելու համար»:

Մխիթար սպարապետի պանթեոնը

Ճոճվող կամուրջ

- Ենթադրել, որ երբեւէ պետական մակարդակով մշակույթի նախարարությունն ինքնակամ քայլեր կձեռնարկի, մշակութային գերկենտրոնացած Երեւանից հայացքը կթեքի դեպի մեր կողմերը, կարծում եմ, այնքան էլ հուսալի չէ... Երեւի Այունիքի թերթն էլ՝ «Այունյաց երկիրն» էլ այստեղ անելիք կունենա…

Մտահոգությունս դեռ չարտահայտած՝ Սամվել Ալեքսանյանի պատասխանը չի ուշանում.

– Ճիշտ եք, թերթը մեծ անելիք ունի, դեպքերի բարի դասավորության դեպքում առաջին իսկ գործս երկրի բարձր իշխանություններին նամակ գրելը կլինի, կառաջարկեմ հնավայրը պետական հոգածությամբ գոտի հայտարարել, իսկ նրա նվիրյալին՝ Ժորա Ալեքսանյանին, ներկայացնել պետական պարգեւի: Մարդը մշակութային բացառիկ գործ է արել, մշակութային գործին մշակութային գնահատական պետք է տրվի: Մինչեւ հիմա նրա կատարած գործն արժանի մակարդակով չի գնահատել: Վաղուց ժամանակն է…

Կա՞ մեկը, որ կասկածում է այս ճշմարտությանը, կարծում եմ՝ ոչ:

Մեր զրույցն էլ կարծես մոտեցավ բնականոն ավարտին. ամենակարեւորն ասվեց, զրույցի մեջ հնչած նորությունն էլ մարտահրավերի պես մշակութային եւ օրախնդիր էր. Ժորա Ալեքսանյանի կատարածի հետագա շարունակությունը մենք բոլորս տեսնում ենք միայն պետական խնամքի ներքո, զարգացման մեջ:

…Չգիտեմ ինչու, նյութը պատրաստելուց հետո՝ առաջին անգամ ձայնագրիչիս մեջ ձայնագրված մեր զրույցը չեմ ուզում ջնջել, հատկապես՝ Զորապետ Մխիթարի, թույլ տվեք ասել, պանթեոնում զրուցածը:

Մեզ միացել էին հիասքանչ տարածքի թռչունների ձայներն ու թռչնային երգ-աղաղակները… Ավելի բարձր էի խոսում, սրբագրում, ոսկեղենիկ դարձնում մեր զրույցը…

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Հ.Գ. *Նյութը պատրաստ էր տպագրության, երբ «Հրապարակ» թերթի հուլիսի 22-ի համարում կարդացինք այս.*

«Հայ ազգը դարեր շարունակ պայքարել է անկախ հայրենիք ունենալու եւ հայրենիքի սահմաններն ամուր պահելու համար: Մենք ցեղասպանություն ենք վերապրել, բայց կանք եւ մեր կատարած գործերով ներկայանում ենք աշխարհին: Հին Խնձորեսկի երկու «ափերն» իրար կապող կամրջի կառուցման հեղինակ եւ հովանավոր Ժորա Ալեքսանյանն այն հայերից է, ում կատարած գործերն արժանի են բարձր գնահատականի: «Ճոճվող կամուրջն» այսօր անտարբեր չի թողնում ոչ մի զբոսաշրջիկի: Նրանք զարմանքով եւ միեւնույն ժամանակ հիացմունքով են խոսում իր տեսակի մեջ եզակի կախովի ճոճվող կամրջի մասին: Կամրջի կառուցումն սկսելուց առաջ Ժորա Ալեքսանյանի նախաձեռնությամբ եւ միջոցներով Խնձորեսկում խաչքարեր են տեղադրվել՝ նվիրված Արցախյան զոհերի հիշատակին, կառուցվել է հանգստյան գոտի, վերանորոգվել է Մխիթար սպարապետի գերեզմանը եւ այլն: Նա մշտապես եղել է ժողովրդի կողքին, աջակցել բոլոր կարիքավորներին, զոհվածների ընտանիքներին եւ երբեք չի մտածել անձնական միջոցներ կուտակելու մասին:

Արցախյան պատերազմի ժամանակ եղել է հացի կոմբինատի տնօրեն եւ հանապազօրյա հացով ապահովել բազմաթիվ ընտանիքների:

«1.500.000+1» Հայրենիք-Սփյուռք մշակութային կամուրջ համահայկական կազմակերպությունը գնահատում եւ պարգեւատրում է մարդկանց, ովքեր նպաստում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, պատմական արդարության վերականգնմանը եւ մեր ձայնը լսելի են դարձնում աշխարհին: Այս կապակցությամբ «1.500.000+1» Հայրենիք-Սփյուռք մշակութային կամուրջ համահայկական խորհրդի որոշմամբ «Ավետիս Սիարոնյան» հուշամեդալով պարգեւատրվեց հայորդի բարերար, ժողովրդի վստահությունն ու հարգանքը վայելող, բոլորի կողմից սիրված Ժորա Հայկի Ալեքսանյանը»:

ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Ում հավատալ՝ Սմբատ Օրբելյանի՞ն, թե՞ Վահե Հակոբյանին

Սյունիքում ինկվիզիցիայի ժամանակներ են, ամեն ինչ չէ, որ կարելի է ասել, իսկ եթե ասում ես՝ մարզպետի քիմքին հաճո պիտի լինի, այլապես…

Հուլիսի 21-ին Կապանում տեղի ունեցավ հայկական ակնաբուժական ընկերության կողմից իրականացվող «Լույս հայի աչքին» ծրագրի շրջանակներում կյանքի կոչված ակնաբուժական կենտրոնի բացումը, որը հանրապետությունում երրորդն է Տավուշի եւ Լոռու մարզերից հետո:

Ոչ միայն մարզկենտրոնի, այլեւ մարզի մյուս բնակավայրերի բնակիչները երախտագիտություն են հայտնում Հայկական ակնաբուժական նախագծի հիմնադիր-նախագահ Ռոջեր Օհանեսյանին՝ Կապանում ակնաբուժական կենտրոնի բացմանը մեծապես օժանդակելու համար:

Սակայն զարմանալի կլիներ, որ խիստ գնահատելի այդ ծրագրի համապատկերի վրա փայլատակելու վարժանք չաներ Վահե Հակոբյանը: Ավելին, նա փորձեց առիթն օգտագործել եւ փառաբանել նաեւ իր դրածոներից մեկին՝ Կապանի բժշկական կենտրոնի նորանշանակ տնօրեն Կարեն Մելքոնյանին՝ նշելով՝ *«Կարող եմ հիշեցնել, անշուշտ, բժշկական կենտրոնի նորանշանակ, դեռ պաշտոնակատար Մելքոնյան Կարենի դերակատարումը. հիմնական մտահղացումը, միտքն ու իրականացնելը պատկանել են իրեն: Կարող եմ հիշեցնել նախագծի արժեքը, դա մոտ 12 մլն ԱՄՆ դոլար է»:*

Առաջին հայացքից արտառոց ոչինչ չկա ասվածի մեջ, բայց…

Իսկապե՞ս այդ կենտրոնի հիմնադրման մտահղացումը, միտքն ու իրականացնելը պատկանում են Կարեն անունով նորանշանակին, մանավանդ որ մոտ երեք ամիս է, ինչ նա զբաղեցնում է Կապանի բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնը:

Իսկապե՞ս կապանյան նախագծի արժեքը 12 մլն ԱՄՆ դոլար է կազմում եւ արդյո՞ք այդ ներդրումի հետ կապ ունի Կարեն նորահայտը:

Այդ հարցերի պատասխանը փորձեցինք ճշտել ծրագրի աշխատակազմի պատասխանատուներից: Ըստ աշխատակազմի ներկայացուցչի՝ դեռեւս 2014-ին է քննարկվել Հայաստանում նման կենտրոններ ստեղծելու գաղափարը եւ ՀՀ առողջապահության նախարարության հետ որոշվել է կենտրոններ հիմնել Տավուշում, Լոռիում, Սյունիքում եւ Գյումրիում: 2015 թվականից էլ մեկնարկել են Կապանում կենտրոն հիմնելու աշխատանքները:

Ինչ վերաբերվում է կապանյան ծրագրի նախագծային արժեքին, ապա (ըստ նույն աղբյուրի) մեկ կենտրոնի նախագծային արժեքը (այդ թվում՝ առաջիկա հինգ տարվա ծախսերը ներառյալ) 1 մլն դոլար է:

Ինչպես տեսնում ենք՝ Վահեի ու ծրագրի պատասխանատուների ասածն իրար հետ հեռավոր աղերս անգամ չունեն: Ի դեպ, Կապանի բժշկական կենտրոնի նախկին տնօրեն Սմբատ Օրբելյանը նույնպես ասաց այն, ինչ պնդել էր ծրագրի աշխատակազմի ներկայացուցիչը:

Հիմա գլխավոր հարցը՝ ում հավատալ՝ Սմբատ Օրբելյանին եւ ծրագրի աշխատակազմի պատասխանատո՞ւին, թե՞ Վահե Հակոբյանին:

Շատ կուզենայինք լսել ավելի քաջատեղյակ պաշտոնյաների պատասխանը եւս: Բայց, առաջ անցնելով հայտարարենք՝ Սմբատ Օրբելյանին չհավատալու հիմքեր չունենք: Մոտ քսան տարի Կապանի առողջապահական համակարգը ղեկավարած, իր գործընկերների հետ հազարավոր մարդկանց կյանք փրկած բժիշկը չի կարող մեղանչել ճշմարտության դեմ:

Իսկ եթե Վահե Հակոբյանը շարունակում է պնդել իր կողմից հայտարարածը, ապա պետք է խնդրենք նրան՝ ցույց տալ, թե ի՞նչ կոնկրետ սարքավորումների եւ աշխատանքների վրա է ծախսվել 12 մլն դոլարը, այլապես ստիպված կլինենք նրան անմեղ մի խորհուրդ մեկնել՝ մի՛ ստիր:

«Սյունյաց երկիր»

Երբ գալիս է սեպտեմբերը

Սյունիքի մարզպետն օրենքին հակասող եւ իր լիազորություններին անհամապատասխան հանձնարարություն է տվել դպրոցների տնօրեններին

Մարզխորհրդի վերջին նիստում (13 հուլիսի 2017թ.) Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը ժամանակ տվեց հանրակրթական դպրոցների տնօրեններին, համայնքների ղեկավարներին՝ (մինչեւ սեպտեմբերի 1-ը) ազատվել այն աշխատողներից, ում հետ տնօրենը բարեկամական կապեր ունի: Հանձնարարությունն այսպես ձեւակերպվեց՝ «արմատախիլ անել այդ երեւույթը»: Ավելի վաղ եւս մարզպետն անդրադարձել էր «այդ երեւույթին» եւ նույնանման հանձնարարություն իջեցրել:

Հատկապես հանրակրթական դպրոցներում այդ հանձնարարությունը խիստ տարակուսանքով է ընդունվել: Եվ մարդիկ դիմել են «Սյունյաց երկրին»՝ խորհրդակցել մասնագետների հետ ու պարզություն մտցնել մարզպետի հանձնարարության իրավազորության (օրինականության) հարցում:

Հարցին, ըստ էության, երկու տեսանկյունից պետք է մոտենալ՝ բարոյական եւ իրավական:

Բարոյական ասպեկտով մարզպետ Վահե Հակոբյանն ի վերուստ զրկված է նման իրավունքից: Ինքն (ըստ մամուլի հրապարակումների) աշխատում է մի քանի տեղ եւ ամսական միլիոնավոր դրամի հասնող գումար «վաստակում», նույնը՝ իր կինը: Ինքը մի քանի տասնյակ մարդ է բերել Երեւանից եւ ներդրել Քաջարանի կոմբինատում ու Սյունիքի մարզպետարանում՝ չասելով, թե ովքեր են նրանք եւ ինչ կապերով են կապված իր հետ: Ինքն առանց հավաստագրի, առանց պետական նմուշի դիպլոմի (հակառակ օրենքի հստակ պահանջի) մեկին նշանակում է հանրակրթական դպրոցի տնօրենի պաշտոնակատար (հավանաբար հաշվի առնելով նրա անուրանալի վաստակը սուրճ եփելու խիստ ինտելեկտուալ ու ազգային գործում՝ իր երբեմնի նախընտրական շտաբում), իսկ գյուղում (որտեղ գրեթե բոլորը միմյանց բարեկամ են) դպրոցի տնօրենն իրավունք չունի օրենքի սահմաններում իր բարեկամին հավաքարար նշանակել: Եվ ոչ ոք նրան չի ասում՝ տղա, այդ ի՞նչ ես անում: Եվ այդ մարդը փորձում է կասկածի տակ առնել նվազագույն աշխատավարձով կամ նույնիսկ 0,5 եւ 0,25 դրույքով դպրոցներում աշխատողների իրավունքը, ովքեր դպրոցի տնօրենի հետ ազգակցական կապ ունեն…

Հարցի իրավական ասպեկտը. ի գիտություն Վահե Հակոբյանի՝ ՀՀ օրենսդրությամբ չկա որեւէ սահմանափակում կամ խոչընդոտ նույն հիմնարկում (կազմակերպությունում) բարեկամների միջեւ աշխատանքի հետ կապված (բացառության մասին՝ քիչ հետո): Այնպես որ՝ մարզպետի հանձնարարությունն ի սկզբանե ապօրինի է եւ ենթակա չէ կատարման: Եթե ինքն իսկապես ուզում է պետության անունից պահանջողի դեր խաղալ եւ կրթության հարցերով մտահոգվածի պատրանք ստեղծել, ապա պետք է վկայակոչի գործող օրենսդրության գոնե մեկ դրույթ:

Եվ եթե նման պատրվակով հանրակրթական դպրոցներում աշխատանքից ազատվելու որեւէ դեպք արձանագրվի առաջիկայում, ապա այն (առնվազն) լրագրողական հետաքննության առարկա կդառնա:

Հիմա՝ բացառության մասին. բացառությունը Հանրային ծառայության եւ Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքներում սահմանված կոնկրետ դեպքերի, կոնկրետ նշված ազգականների մասով է:

Այսպես՝

1. Հանրային ծառայողին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձին արգելվում է՝ համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ (բացառությամբ պատգամավորների),

2. Համայնքային ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

Եզրակացություն՝ Սյունիքի մարզպետը հուլիսի 13-ի մարզխորհրդի նիստում օրենքին հակասող, ապօրինի եւ իր լիազորությունների մեջ չմտնող հանձնարարություն է տվել դպրոցների տնօրեններին եւ համայնքների ղեկավարներին, որը կատարման ենթակա չէ:

Ասվածը վերահաստատելու նպատակով հատուկ մարզպետի համար երկու հիշեցում կատարենք ՀՀ Սահմանադրությունից:

1-ին հոդված՝ **«Հայաստանի Հանրապետությունն… իրավական պետություն է»:**

6-րդ հոդված՝ **«Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:**

Մարզպետը ո՛չ Սահմանադրությամբ, ո՛չ որեւէ օրենքով նման լիազորությամբ օժտված չէ:

«Սյունյաց երկիր»

Վարչապետին ներկայացված թվե՞րն են հավաստի, թե՞ թերթում հրապարակվածը

Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի սյունիքյան վերջին այցի (28 հուլիսի 2017թ.) առիթով հրապարակված պաշտոնական հաղորդագրության մեջ կարդում ենք՝ **«43 հազար հեկտար վարելահողից մշակվում է 85 տոկոսը»:** Ընդ որում՝ այդ խոսքը հնչել է մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուի՝ Գագիկ Խաչատրյանի զեկույցում:

Մինչդեռ, «Սյունյաց երկիր» թերթի 2017թ. ապրիլի 29-ի համարում Գագիկ Խաչատրյանը հայտարարել է՝ **«Մարզի գյուղատնտեսական հողերի 40 տոկոսը չի մշակվում»:**

Մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետի պաշտոնակատարը նույն հարցազրույցում նշել է նաեւ, որ 2016թ. «մարզում կատարվել է 10500 հա աշնանացան՝ նախորդ տարվանից 7000 հա-ի չափով պակաս:

Մենք հակված չենք կարծելու, որ մարզի գյուղատնտեսության ոլորտի մերօրյա երախտավորներից մեկը՝ Գագիկ Խաչատրյանն ապատեղեկատվություն է ներկայացրել հանրապետության վարչապետին: Եվ որպեսզի այլեւայլ ենթադրությունների մեջ չընկնենք, Գագիկ Խաչատրյանն ուղղակի պարտավոր է բացատրություն տալ եւ պատասխանել պարզագույն հարցի՝ որ թվերն են հավաստի՝ վարչապետին ներկայացվա՞ծը, թե՞ թերթում հրապարակվածը:

«Սյունյաց երկիր»

ԿՈՐԵԼ Է Արսեն Ռոբերտի Սարգսյանի՝ Կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 70706 հաշվառման վկայականը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Ի սրտե երախտագիտություն եմ հայտնում «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության վիրաբուժական բաժանմունքի վիրաբույժներ Ասատուր Ասատրյանին, Սարիկ Աթաջանյանին, անեստեզիոլոգ Սերգեյ Գասպարյանին՝ բարձր մակարդակով բուժսպասարկման եւ սրտացավ վերաբերմունքի համար: Դոնարա Բաղդասարյան

ԿՈՐԵԼ Է Կապանի բժշկական ուսումնարանի 1996-97թթ. ուս.տարվա շրջանավարտ Գայանե Գագիկի Աղայանի K 028759 դիպլոմը: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 02.08.2017թ.: